

Շ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

Շ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Շ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ռ Ա Կ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Ե Կ Բ Ե Լ Ա Ռ Ո Ւ Մ Ի Շ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ա Ռ Ա Կ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն Մ Ի Ջ Ե Կ Ե Կ Ա Ս Ո Ւ Տ Ն Ե Ր Ի Ե Կ Գ Ո Ւ Յ Ե Ի Կ Ր Կ Ն Ա Կ Ի Շ Ա Ր Կ Ո Ւ Մ Ը Բ Ա Ց Ա Ո Ւ Ե Լ Ո Ւ Ե Կ Շ Ա Ր Կ Ո Ւ Մ Ի Ց Խ Ո Ւ Մ Ա Փ Ե Լ Ը Կ Ա Ն Խ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետություն Կառավարությունն ու Բելառուսի Հանրապետության Կառավարությունը ղեկավարվելով երկու Պայմանավորվող Պետությունների միջև տնտեսական, գիտական, տեխնիկական ու մշակութային համագործակցության զարգացման և ամրապնդման ձգտումով, ու եկամուտների և գույքի կրկնակի հարկման բացառման, հարկումից խուսափման և հարկային խտրականության անթույլատրելիության նպատակով որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը և պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Շողված 1

Ա Ն Ձ Ի Ն Ը, Ո Ւ Մ Ն Կ Ա Ց Մ Ա Ս Բ Կ Ի Ր Ա Ո Կ Ո Ւ Մ Է Շ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Ը

Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտներ հանդիսացող անձանց նկատմամբ:

Շողված 2

Շ Ա Ր Կ Ե Ր, Ո Ր Ո Ն Ց Կ Ր Ա Տ Ա Ր Ա Ծ Կ Ո Ւ Մ Է Շ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր Ը

1. Սույն Համաձայնագիրը կիրառվում է Պայմանավորվող Պետության կամ իշխանության տեղական մարմինների կողմից գանձվող եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ, անկախ դրանց գանձման եղանակից:
2. Եկամտի և գույքի գանձվող հարկեր են համարվում եկամուտների ընդհանուր գումարից, գույքի ընդհանուր գումարից կամ դրանց առանձին տարրերից գանձվող բոլոր հարկերը, ներառյալ գույքի օտարումից առաջացող եկամտից, ձեռնարկությունների կողմից վճարվող աշխատավարձի ընդհանուր գումարից, ինչպես նաև գույքի հավելաճից գանձվող հարկերը:
3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է, մասնավորապես, հետևյալ գոյություն ունեցող հարկերի վրա՝

ա) Հայաստանի դեպքում.

- (i) շահութահարկ,
- (ii) եկամտահարկ,
- (iii) գույքահարկ,

բ) Բելառուսի դեպքում.

- (i) ձեռնարկությունների, միավորումների, կազմակերպությունների եկամտի և շահույթից գանձվող հարկ,
- (ii) ֆիզիկական անձանց եկամտահարկ,
- (iii) անշարժ գույքի հարկ:

4. Սույն Համաձայնագիրը կիրառվում է նաև բոլոր նույնական կամ ըստ էության համանման հարկերի նկատմամբ, որոնք գանձվում են սույն Համաձայնագրի ստորագրումից հետո ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները ժամանակին ծանուցում են միմյանց իրենց համապատասխան հարկային օրենսդրություններում կատարված էական փոփոխությունների մասին:

Նոդված 3

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար, եթե ենթատեքստից այլ բան չի բխում՝
- ա) «Պայմանավորվող Պետություն» և «մյուս Պայմանավորվող Պետություն» տերմիններն, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Բելառուս,
 - բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետություն և, երբ օգտագործվում է աշխարհագրական իմաստով, նշանակում է տարածք, որի նկատմամբ, միջազգային իրավունքի նորմերին ու ներքին օրենսդրությանը համաձայն, Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն,
 - գ) «Բելառուս» տերմինը նշանակում է Բելառուսի Հանրապետություն և, աշխարհագրական իմաստով օգտագործելիս, նշանակում է Բելառուսի Հանրապետության ինքնիշխանության տակ գտնվող տարածք, և որը, համաձայն Բելառուսի օրենսդրությանն ու միջազգային իրավունքի, գտնվում է Բելառուսի Հանրապետության իրավասության տակ,
 - դ) «անձ» տերմինը ներառում է ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում,
 - ե) «ընկերություն» տերմինը նշանակում է ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավորում, որը հարկման նպատակների համար դիտարկվում է որպես իրավաբանական անձ,
 - զ) «Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,
 - է) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է ցանկացած փոխադրում Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից շահագործվող ծովային կամ օդային նավով, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցով, բացառությամբ, երբ այդպիսի փոխադրումը իրականացվում է միմիայն մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող կետերի միջև,
 - ը) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է՝
 - (i) Հայաստանի դեպքում՝ Պետական եկամուտների նախարար կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը,
 - (ii) Բելառուսի դեպքում՝ Պետական հարկային կոմիտե կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչը,
 - թ) «ազգային անձ (քաղաքացի)» տերմինը նշանակում է՝
 - (i) Պայմանավորվող Պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

(ii) Պայմանավորվող Պետության գործող օրենսդրության հիման վրա որպես այդպիսին կարգավիճակ ստացած ցանկացած իրավաբանական անձ, ընկերակցություն կամ ասոցիացիա:

2. Պայմանավորվող Պետության կողմից սույն Համաձայնագիրը կիրառելիս, դրանում չսահմանված ցանկացած տերմին ունի, եթե ենթատեքստից այլ բան չի բխում, այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ Պետության օրենսդրությամբ այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ տարածվում է Համաձայնագիրը:

Շողված 4 ՌԵՁԻԴԵՆՏ

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «Պայմանավորվող Պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է անձ, որն այդ Պետության օրենսդրությամբ այնտեղ ենթակա է հարկման բնակության վայրի, գրանցման վայրի, ռեզիդենտության կամ այլ համանման բնույթի չափանիշի հիման վրա: Սակայն, այդ տերմինը չի տարածվում այն անձի վրա, որն այդ Պետությունում ենթակա է հարկման միայն այդ Պետության աղբյուրներից ստացած եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի նկատմամբ:
2. Այն դեպքում, երբ սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, ապա նրա կարգավիճակը որոշվում է հետևյալ կերպ՝
 - ա) նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ ունի իրեն պատկանող մշտական կացարան, եթե նա երկու Պետություններում էլ ունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),
 - բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի կենսական շահերի կենտրոն կամ եթե Պետություններից և ոչ մեկում չունի իրեն պատկանող մշտական կացարան, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա սովորաբար բնակվում է,
 - գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետությունում կամ նրանցից և ոչ մեկում էլ սովորաբար չի բնակվում, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որի քաղաքացին է հանդիսանում,
 - դ) եթե նա չի հանդիսանում Պետություններից և ոչ մեկի քաղաքացի, ապա Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմիններն այդ հարցը լուծում են փոխադարձ համաձայնությամբ:
3. Երբ, սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձ չհանդիսացող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, ապա նա համարվում է այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա, համաձայն այդ Պետության օրենսդրության, ստացել է իր կարգավիճակը որպես այդպիսին (գրանցվել է):

Շողված 5 ՄՇՏԱԿԱՆ ՎԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ (ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)

1. Սույն Համաձայնագրի նպատակների համար «մշտական հաստատություն (ներկայացուցչություն)» տերմինը նշանակում է գործունեության մշտական վայր, որի միջոցով Պայմանավորվող Պետության ձեռնարկությունն ամբողջությամբ կամ մասամբ իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն մյուս Պայմանավորվող Պետությունում:

2. «Մշտական հաստատություն (ներկայացուցչություն)» տերմինը, մասնավորապես, ներառում է.
 - ա) ղեկավարման վայր,
 - բ) մասնաճյուղ (բաժանմունք),
 - գ) գրասենյակ,
 - դ) գործարան,
 - ե) արտադրամաս,
 - զ) հանքահոր, հանքարան, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների հետախուզման, շահագործման կամ արդյունահանման ցանկացած այլ վայր,
 - է) ապրանքների կամ արտադրանքի իրացման համար օգտագործվող զետեղարան:
3. Շինարարական հրապարակը կամ շինարարական, մոնտաժային կամ հավաքման օբյեկտը կամ դրանց հետ կապված վերահսկողական գործունեությունը համարվում է մշտական հաստատություն (ներկայացուցչություն), եթե այդպիսի հրապարակի կամ օբյեկտի տևողությունը գերազանցում է 12 ամիսը:
4. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, «մշտական հաստատություն (ներկայացուցչություն)» տերմինը չի ներառում՝
 - ա) հարմարությունների օգտագործումը բացառապես ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահպանման, ցուցադրման կամ մատակարարման նպատակով,
 - բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես պահպանման, ցուցադրման կամ մատակարարման նպատակով,
 - գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահումը բացառապես այլ անձի կողմից մշակման նպատակով,
 - դ) գործունեության մշտական վայրի պահումը ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի բացառապես գնման, կամ տեղեկատվության հավաքման նպատակով,
 - ե) գործունեության մշտական վայրի պահումը ձեռնարկության համար բացառապես նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեության իրականացման նպատակով,
 - զ) գործունեության մշտական վայրի պահումը բացառապես ա)-ե) ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության իրականացման համար, պայմանով, որ այդպիսի համակցության արդյունքում գործունեության մշտական վայրի ընդհանուր գործունեությունը կրում է նախապատրաստական կամ օժանդակ բնույթ:
5. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, եթե անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որին վերաբերում է սույն հոդվածի 6-րդ կետը) տարբերվող անձը գործում է Պայմանավորվող Պետությունում մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկությունը համարվում է առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն (ներկայացուցչություն) ունեցող ցանկացած գործունեության առումով, որն այդ անձը իրականացնում է ձեռնարկության համար, եթե այդ անձը առաջինը հիշատակված Պետությունում ունի և սովորաբար օգտագործում է ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու

իրավասություն, բացառությամբ, եթե այդ անձի գործունեությունը սահմանափակվում է սույն հոդվածի 4-րդ կետում նշվածով, որն էթե նույնիսկ իրականացվում է գործունեության մշտական վայրի միջոցով, ապա, համաձայն սույն կետի դրույթների, գործունեության մշտական վայրը չի վերածում մշտական հաստատությանը (ներկայացույչությանը):

6. Ձեռնարկությունը չի դիտարկվում որպես Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն (ներկայացույչություն) ունեցող այն դեպքում, երբ նա այդ Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում բրոքերի, կոմիսիոների կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած այլ գործակալի միջոցով, պայմանով, որ այդ անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում:
7. Այն փաստը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը վերահսկում կամ վերահսկվում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության (ներկայացույչության) միջոցով կամ այլ կերպ), ինքնին այդ ընկերություններից մեկին չի վեր ածում մյուսի մշտական հաստատությանը (ներկայացույչությանը):

Շողված 6

ԵԿԱՍՈՒՏՆԵՐ ԱՆՁԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքի ստացվող եկամուտները (ներառյալ եկամուտ գյուղատնտեսությունից կամ անտառտնտեսությունից) կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:
2. «Անշարժ գույք» տերմինը ունի այն նշանակությունը, որը նա ունի այն Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է տվյալ գույքը. ծովային և օդային նավերը, ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտային միջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:
3. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են նաև անշարժ գույքի անմիջական օգտագործումից, վարձակալությանը տրամադրելու կամ ցանկացած այլ ձևով օգտագործումից ստացված եկամուտների նկատմամբ:
4. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից և անկախ անձնական ծառայությունները մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից ստացվող եկամուտների նկատմամբ:

Շողված 7

ՇԱՀՈՒՅՑ ԶԵՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը հարկվում է միայն այդ Պայմանավորվող Պետությունում, եթե միայն այդ ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող Պետությունում ձեռնարկատիրական գործունեությունը չի իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացույչության) միջոցով: Եթե ձեռնարկությունը ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է վերը նշված ձևով, ապա այդ ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն մասով, որը վերագրվում է այդ մշտական հաստատությանը (ներկայացույչությանը):
2. Հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները, երբ Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող Պետությունում ձեռնարկատիրական

գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով, ապա Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրում այդ մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) վերագրվում է այն շահույթը, որը նա կարող էր ստանալ, եթե լիներ նույն կամ նման պայմաններում, նույն կամ նման գործունեություն իրականացնող և ինքնուրույն գործող առանձնացված և ինքնուրույն ձեռնարկություն, և գործեր լիովին անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն (ներկայացուցչությունն) է հանդիսանում:

3. Մշտական հաստատության (ներկայացուցչության) շահույթը որոշելիս թույլատրվում է մշտական հաստատության (ներկայացուցչության) գործունեության նպատակների համար կատարված՝ փաստաթղթերով հաստատված ծախսերի նվազեցում, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, անկախ այն հանգամանքից, թե կատարված են այդ ծախսերը այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը), թե այլուր:
4. Այն դեպքում, երբ Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) վերագրվող շահույթի որոշումը ձեռնարկության տարբեր ստորաբաժանումների միջև շահույթի ընդհանուր գումարի համամասնական բաշխման հիման վրա հանդիսանում է սովորական պրակտիկա, ապա սույն հոդվածի 2-րդ կետում ոչինչ չի խոչընդոտի Պայմանավորվող Պետությանը հարկվող շահույթը հաշվարկել այն եղանակով, որը սովորաբար կիրառվում է. բաշխման ընտրված եղանակը պետք է համապատասխանի սույն հոդվածում պարունակվող սկզբունքներին:
5. Ոչ մի շահույթ չի վերագրվում մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը)՝ այդ մշտական հաստատության (ներկայացուցչության) կողմից ձեռնարկության համար ապրանքներ կամ արտադրանք, բացառապես, գնելու պատճառով:
6. Նախորդ կետերի նպատակների համար, մշտական հաստատությանը (ներկայացուցչությանը) վերագրվող շահույթն ամեն տարի որոշվում է միևնույն եղանակով, եթե չլինի այն փոփոխելու համար պատշաճ և բավարար պատճառ:
7. Եթե շահույթը ներառում է եկամտի տարրեր, որոնք առանձին դիտարկվում են սույն Համաձայնագրի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

Շողված 8

ՄԻՋԱՉԳԱՅԻՆ ՓՈՒՏԱՂՈՒՄՆԵՐ

1. Միջազգային փոխադրումներում ծովային կամ օդանային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների շահագործումից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած շահույթը հարկվում է միայն այդ Պետությունում:
2. Սույն հոդվածի նպատակների համար միջազգային փոխադրումներում ծովային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների շահագործումից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած շահույթը ներառում է՝
 - i) սույն հոդվածի 1-ին կետում թվարկված նավերի և տրանսպորտային միջոցների (առանց անձնակազմի) վարձակալությունից ստացված եկամուտները, և
 - ii) կոնտեյներների օգտագործումից կամ վարձակալությունից ստացված եկամուտները (ներառյալ կոնտեյներների փոխադրմանը վերաբերող սարքավորումները),

եթե այդպիսի վարձակալությունը կամ օգտագործումը միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային կամ օդանային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների շահագործման նկատմամբ հանդիսանում է երկրորդական:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ գործունեությունում կամ նավերի և տրանսպորտային միջոցների շահագործմամբ զբաղվող միջազգային կազմակերպությունում մասնակցությունից ստացված շահույթի նկատմամբ՝ բայց միայն շահույթի այն մասով, որը հանդիսանում է նրա փայլը համատեղ գործունեությունում:

Նոդված 9

ՁՈՒԳՈՐԴՎԱԾ ԶԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Այն դեպքում, երբ.
 - ա) Պայմանավորվող Պետության ձեռնարկությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ
 - բ) միևնույն անձիք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող Պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության կառավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև՝ նրանց առևտրային կամ ֆինանսական փոխհարաբերություններում, ստեղծվում կամ սահմանվում են պայմաններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կարող էին ստեղծվել երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա այդ դեպքում ցանկացած շահույթ, որը կարող էր հաշվեգրվել նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և համապատասխանաբար հարկվել:
2. Երբ Պայմանավորվող Պետությունն այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և համապատասխանաբար հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկությունն այդ մյուս Պետությունում ենթարկվել է հարկմանն և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը կարող էր հաշվեգրված լինել առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկությունները բնորոշող փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթի առնչությամբ այնտեղ գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում: Այդպիսի ճշգրտումը որոշելիս պետք է քննարկվեն նաև սույն Համաձայնագրի այլ դրույթներն, իսկ Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները, անհրաժեշտության դեպքում, կխորհրդակցեն միմյանց հետ:

Նոդված 10

ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Սակայն, այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունն՝ այդ Պետության օրենսդրությանը համաձայն, բայց եթե ստացողը հանդիսանում է շահաբաժինների փաստացի սեփականատեր, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի՝
 - ա) շահաբաժինների համախառն գումարի 10 %, եթե փաստացի սեփականատեր է հանդիսանում ընկերությունը, որը տիրապետում է շահաբաժիններ վճարող ընկերության կանոնադրական կապիտալի առնվազն 30 %,

բ) շահաբաժինների համախառն գումարի 15% մնացած բոլոր դեպքերում:

Սույն կետը չի ազդում ընկերության այն շահույթի հարկման վրա, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ բաժնետոմսերից կամ շահույթին մասնակցության իրավունք տվող, պարտապահանջ չհանդիսացող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ նմանատիպ իրավունքներից, որը ենթակա է նույնախիսի հարկմանն, ինչպես բաժնետոմսերից ստացված եկամուտը այն Պետության օրենսդրությանը համաձայն, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:
4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, մյուս Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող հաստատուն բազայից, և մասնակցությունն, որի առնչությամբ վճարվում են շահաբաժիններն, հիրավի կապված է այդախիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են սույն Համաձայնագրի 7 հոդվածի կամ 14 հոդվածի դրույթները:
5. Այն դեպքում, երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող Պետությունից, այդ մյուս Պետությունը չի հարկում ընկերության կողմից վճարվող շահաբաժինները, բացառությամբ, եթե այդախիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին կամ, եթե մասնակցությունն, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, հիրավի կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) կամ հաստատուն բազայի հետ, և չի հարկում ընկերության չբաշխված շահույթը ընկերության չբաշխված շահույթից գանձվող հարկով, նույնիսկ, եթե վճարվող շահաբաժինները կամ չբաշխված շահույթը լիովին կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:

Շողված 11 ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Սակայն, այդախիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ դրանք առաջանում են համապատասխան այդ Պետության օրենսդրությանն, բայց եթե ստացողը հանդիսանում է տոկոսների փաստացի սեփականատեր, ապա այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10%:
3. Չմայած սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներին, Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության Կառավարության, այդ մյուս Պայմանավորվող Պետության Ազգային (Կենտրոնական) Բանկի սեփականություն հանդիսացող տոկոսներն առաջինը հիշատակված Պետությունում ազատվում են հարկումից:
4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է եկամուտ ցանկացած տեսակի պարտապահանջներից՝ անկախ գրավային ապահովումից և անկախ պարտապահի շահույթում մասնակցության իրավունքի առկայությունից, և մասնավոր-

րապես, եկամուտ կառավարական արժեթղթերի, եկամուտ պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի կամ փոխառության տոմսերի հետ կապված պարզևավճարներն ու շահումները: Սույն հոդվածի նպատակների համար անժամանակ վճարումների համար տուգանքները որպես տոկոսներ չեն դիտարկվում:

5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով, կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող հաստատուն բազայի, և պարտապահանջը, որի հիման վրա վճարվում են տոկոսները, հիրավի կապված է այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքների կախված, կիրառվում են սույն Համաձայնագրի 7 հոդվածի կամ 14 հոդվածի դրույթները:
6. Համարվում է, որ տոկոսներն առաջանում են Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն ինքն այդ Պայմանավորվող Պետությունն է, նրա իշխանության տեղական մարմինը կամ այդ Պայմանավորվող Պետության ռեզիդենտը: Սակայն, եթե տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն (ներկայացուցչություն) կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը և որի համար վճարվում են տոկոսները, և այդպիսի տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը) կամ հաստատուն բազան, ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը) կամ հաստատուն բազան:
7. Եթե վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջի առնչությամբ վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում, պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները, վճարումների գերազանցող մասը առաջվա պես հարկվում է Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենսդրություններին համաձայն:

Նոդված 12 ՈՌՅԱԼԹԻ

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Սակայն, այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ դրանք առաջանում են համապատասխան այդ Պետության օրենսդրությանը, բայց եթե ստացողը հանդիսանում է ռոյալթիի փաստացի սեփականատեր, ապա այդ ձևով զանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 10%:
3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է ցանկացած տեսակի վճարումներ, որոնք ստացվել են որպես փոխհատուցում գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի, ներառյալ կինոնկարները կամ ռադիո կամ հեռուստատես-

սային հաղորդումների ֆիլմերն ու ժապավենները, ցանկացած պատենտի, ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, պլանի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների, կամ տրանսպորտային միջոցների օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկատվության համար:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստապի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով, կամ այդ մյուս Պայմանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող հաստատուն բազայից, և իրավունքը կամ գույքը, որի առնչությամբ վճարվում է ռոյալթին, հիրավի կապված է այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Համաձայնագրի 7 հոդվածի կամ 14 հոդվածի դրույթները:
5. Համարվում է, որ ռոյալթին առաջանում է Պայմանավորվող Պետությունում, եթե վճարող են հանդիսանում ինքը՝ այդ Պայմանավորվող Պետությունը, նրա իշխանության տեղական մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն, եթե ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն (ներկայացուցչություն) կամ հաստատուն բազա, որի առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորություն, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը) կամ հաստատուն բազան, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը) կամ հաստատուն բազան:
6. Եթե վճարողի և փաստապի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ երրորդ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկատվության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստապի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում, պատշաճ կերպով հաշվի առնելով սույն Համաձայնագրի այլ դրույթները, վճարումների գերազանցող մասը առաջվա պես հարկվում է Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրի օրենսդրություններին համաձայն:

Նոդված 13 ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող՝ սույն Համաձայնագրի 6 հոդվածում սահմանված անշարժ գույքի օտարումից ստացված եկամուտները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող Պետությունում:
2. Պայմանավորվող Պետության ձեռնարկության մյուս Պայմանավորվող Պետությունում ունեցած մշտական հաստատության (ներկայացուցչության) առևտրային գույքի մաս կազմող շարժական գույքի, կամ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի մյուս Պայ-

մանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով ունեցած հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված եկամուտները, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից ստացված եկամուտները, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների, կամ այդպիսի ծովային կամ օդային նավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից Պայմանավորվող Պետության ձեռնարկության ստացած եկամուտները հարկվում են միայն այդ Պետությունում:
4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում չնշված ցանկացած գույքի օտարումից ստացած եկամուտները հարկվում են միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում գույք օտարող անձը:

Հոդված 14

ԱՆԿԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի մասնագիտական ծառայությունների մատուցումից կամ անկախ բնույթի այլ գործունեությունից ստացած եկամուտը հարկվում է միայն այդ Պետությունում, բացառությամբ այն դեպքի, երբ նա այդ գործունեությունն իրականացնելու նպատակով մյուս Պայմանավորվող Պետությունում իր տրամադրության տակ ունի կանոնավորապես մատչելի հաստատուն բազա: Եթե նա իր տրամադրության տակ ունի այդպիսի բազա, ապա եկամուտը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այդ հաստատուն բազային վերագրվող մասով:
2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, մասնավորապես, անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ճարտարապետների, ճարտարագետների, ատամնաբույժների, հաշվապահների, աուդիտորների անկախ գործունեությունը:
3. «Հաստատուն բազա» տերմինը նշանակում է գործունեության մշտական վայր, ինչպիսին է առանձնասենյակը կամ գրասենյակը, որի միջոցով անկախ անձնական ծառայություններ մատուցող Պայմանավորվող Պետության ֆիզիկական անձը լիովին կամ մասամբ գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում:

Հոդված 15

ՎԱՐՁՈՒ ԱՆԽԱՏԱՆՔ

1. Հաշվի առնելով սույն Համաձայնագրի 16, 18 և 19 հոդվածների դրույթները, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացվող աշխատավարձն ու այլ համանման վարձատրությունը հարկվում են միայն այդ Պետությունում, եթե միայն վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող Պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացված է մյուս Պայմանավորվող Պետությունում, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացվող վարձատրությունը հարկվում է միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե՝

- ա) ստացողը գտնվում է մյուս Պետությունում ընդամուր առձամբ 183 օրը չզերագանցող ժամկետի կամ ժամկետների՝ տվյալ օրացույցային տարում սկսվող կամ ավարտվող ցանկացած տասներկուամսյա ժամկետի ընթացքում, և
 - բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և
 - գ) վարձատրության վճարման հետ կապված ծախսերը չի կրում այդ մյուս Պետությունում գործատուի ունեցած մշտական հաստատությունը (ներկայացույցությունը) կամ հաստատուն բազան:
3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային կամ օդային նավերի, ճանապարհային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը կարող է հարկվել միայն այդ Պետությունում:

Հոդված 16
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐԸ

Տնօրենների հոնորարներն ու այլ համանման վճարումները, որոնք Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ, կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 17
ԱՐՏԻՍՏՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

- 1. Չնայած սույն Համաձայնագրի 14 և 15 հոդվածների դրույթներին, այն եկամուտը, որը Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության դերասանը, կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ՝ մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացված անձնական գործունեությունից, որպես այդպիսին, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
- 2. Այն դեպքում, երբ արվեստի գործիչ կամ մարզիկի կողմից իրականացվող անձնական գործունեության, որպես այդպիսին, հետ կապված եկամուտը վերագրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա, չնայած սույն Համաձայնագրի 7, 14 և 15 հոդվածների դրույթներին, այդ եկամուտը կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործիչ կամ մարզիկի գործունեությունը:
- 3. Չնայած սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, Պայմանավորվող Պետությունում արվեստի գործիչ կամ մարզիկի կողմից իրականացված գործունեության դիմաց ստացված եկամուտը այդ Պետությունում հարկումից ազատվում է, եթե այդ գործունեությունը իրականացվում է Պայմանավորվող Պետությունների միջև կնքված մշակութային համագործակցության մասին համաձայնագրի շրջանակներում:

Հոդված 18
ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

- 1. Հաշվի առնելով սույն Համաձայնագրի 19 հոդվածի 2-րդ կետի դրույթները, Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող կենսաթոշակներն և այլ համանման վարձատրությունները, կապված նախկին վարձու աշխատանքի հետ, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Չնայած սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետության օրենքով հաստատված սույնիսկական ապահովման գծով ստացվող վճարումները կարող են հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում:

Հոդված 19

ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ա) Պայմանավորվող Պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից այդ Պետությանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարվող՝ կենսաթոշակից տարբերվող վարձատրությունը հարկվում է միայն այդ Պետությունում:
բ) Սակայն, այդպիսի վարձատրությունը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ մյուս Պետությունում և այդ մյուս Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը՝
 - i) հանդիսանում է այդ մյուս Պետության քաղաքացի, կամ
 - ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտը միայն ծառայություններ մատուցելու նպատակով:
2. ա) Պայմանավորվող Պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից, կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից այդ Պետությանը կամ իշխանության տեղական մարմնին մատուցած ծառայությունների դիմաց ֆիզիկական անձին վճարվող ցանկացած կենսաթոշակը հարկվում է միայն այդ Պետությունում:
բ) Սակայն, այդպիսի կենսաթոշակը հարկվում է միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է նրա ռեզիդենտը կամ քաղաքացին:
3. Սույն Համաձայնագրի 15, 16 և 18 Հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող Պետության կամ նրա իշխանության տեղական մարմնի կողմից իրականացվող առևտրային գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց ստացված վարձատրության կամ կենսաթոշակների նկատմամբ:

Հոդված 20

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Մինչև Պայմանավորվող Պետություն անմիջապես ժամանելը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող կամ հանդիսացած և առաջինը հիշատակված Պետությունում բացառապես կրթություն ստանալու կամ պրակտիկա անցնելու նպատակով գտնվող ուսանողի կամ պրակտիկանտի ստացվող վճարումները, նախատեսված ապրելու, ուսանելու կամ պրակտիկա անցնելու համար, այդ Պետությունում չեն հարկվում, պայմանով, որ այդպիսի վճարումներն առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

Հոդված 21

ԱՅԼ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամուտների՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված տեսակները, անկախ դրանց առաջացման վայրից, հարկվում են միայն այդ Պետությունում:
2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում սույն Համաձայնագրի 6 հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից ստացված եկամուտներից տարբերվող եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի եկամուտների ստացողը, լինելով Պայմանա-

վորվող Պետության ռեզիդենտ, մյուս Պայմանավորվող Պետությունում ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով կամ այդ մյուս Պետությունում անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց նկատմամբ վճարվում է եկամուտն, իսկապես կապված են այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, կախված հանգամանքներից, կիրառվում են սույն Համաձայնագրի 7 հոդվածի կամ 14 հոդվածի դրույթները:

3. Չնայած սույ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ սույն Համաձայնագրի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող Պետությունում առաջացած եկամտի տեսակները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Շողված 22 ԳՈՒՅՔ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող՝ սույն Համաձայնագրի 6 հոդվածում նշված անշարժ գույքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության (ներկայացուցչության) ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքով կամ մյուս Պայմանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող Պետության ռեզիդենտի հաստատուն բազային վերաբերող և շարժական գույքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:
3. Պայմանավորվող Պետության ռեզիդենտին պատկանող, միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային կամ օդային նավերով, ճանապարհային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցներով կամ այդպիսի ծովային կամ օդային նավերի, ճանապարհային կամ երկաթուղային տրանսպորտային միջոցների շահագործմանը վերաբերող՝ շարժական գույքով ներկայացված գույքը հարկվում է միայն այդ Պետությունում:
4. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը հարկվում են միայն այդ Պետությունում:

Շողված 23 ԿՐԿՆԱԿԻ ՆԱՐԿԱՆ ԲԱՑԱՌՈՒՄԸ

1. Եթե Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է եկամուտ (շահույթ) կամ նրան պատկանում է գույք, որը, համաձայն սույն Համաձայնագրի դրույթների, կարող է հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում, ապա առաջինը հիշատակված Պետությունը կթույլատրի.

ա) այդ ռեզիդենտի եկամտի (շահույթի) հարկը նվազեցնել այդ մյուս Պետությունում վճարված եկամտի (շահույթի) հարկի գումարին հավասար չափով,

բ) այդ ռեզիդենտի գույքի հարկը նվազեցնել այդ մյուս Պետությունում վճարված գույքի հարկի գումարին հավասար չափով:

Սակայն, ցանկացած դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի (շահույթի) հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրվում է եկամտին (շահույթին) կամ գույքին, որոնք կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Եթե, համաձայն սույն Համաձայնագրի ցանկապատ դրույթի, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի եկամուտը (շահույթը) այդ Պետությունում ազատված է հարկումից, ապա այդ Պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդ ռեզիդենտի եկամտի (շահույթի) մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել հարկումից ազատված եկամուտը (շահույթը):

Նորված 24

ԱՆԽՏՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող Պետության ազգային անձինք (քաղաքացիները) մյուս Պայմանավորվող Պետությունում չեն ենթարկում այլ կամ ավելի ծանր հարկմանը կամ դրա հետ կապված որևէ պարտավորությանը, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորությունն, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք (քաղաքացիները) նույն հանգամանքների դեպքում: Չնայած սույն Համաձայնագրի 1 հոդվածի դրույթների, սույն դրույթը կիրառվում է նաև Պայմանավորվող Պետություններից և ոչ մեկի ռեզիդենտ չհանդիսացող անձանց նկատմամբ:
2. Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտներ հանդիսացող և քաղաքացիություն չունեցող անձինք Պայմանավորվող Պետություններից և ոչ մեկում չպետք է ենթարկվեն այլ կամ ավելի ծանր հարկմանը կամ դրա հետ կապված պարտավորությանը, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորությունն, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել այդ Պետությունների ազգային անձինք (քաղաքացիները) նույն հանգամանքների դեպքում:
3. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության (ներկայացուցչության) հարկումն այդ մյուս Պետությունում չպետք է նվազ բարենպաստ լինի, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումը: Սույն դրույթը չպետք է դիտարկվի որպես Պայմանավորվող Պետությանը պարտավորեցնող տրամադրելու մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտներին որևէ հարկային անհատական արտոնություններ, նվազեցումներ կամ զեղջեր քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա, որոնք նա տրամադրում է իր ռեզիդենտներին:
4. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են սույն Համաձայնագրի 9 հոդվածի 1-ին կետի, 11 հոդվածի 7-րդ կետի կամ 12 հոդվածի 6-րդ կետի դրույթները, Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները, ռոյալթին և այլ վճարումներ, այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես եթե վճարվեին առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին: Նմանապես, մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին Պայմանավորվող Պետության ձեռնարկության ցանկապատ պարտք, այդ ձեռնարկության հարկվող գույքի որոշման նպատակով, ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես եթե դրանք լիներին պարտք առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին:
5. Պայմանավորվող Պետության ձեռնարկությունները, որոնց գույքը ամբողջովին կամ մասամբ, ուղղակի կամ անուղղակիորեն պատկանում կամ կառավարվում է մյուս Պայմանավորվող Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունում չեն ենթարկվում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորությանը, քան հարկումը կամ դրա հետ կապված պարտավորություններն, որին ենթարկվում են կամ կարող են ենթարկվել առաջինը հիշատակված Պետության համանման ձեռնարկությունները:

6. Չնայած սույն Համաձայնագրի 2 հոդվածի դրույթներին, սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած կարգի և տեսակի հարկերի նկատմամբ:

Շոդված 25

ՓՈՒՆՎԱՍՏԱԶՆՆԵՑՄԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԸ

1. Եթե անձը գտնում է, որ Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկմանը, ապա նա կարող է, այդ Պայմանավորվող Պետությունների ազգային օրենսդրություններով նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործը այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում, կամ, եթե իր դեպքն ընկնում է սույն Համաձայնագրի 24 հոդվածի 1-ին կետի դրույթների տակ, ապա այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ազգային անձն է (քաղաքացին) հանդիսանում: Դիմումը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Համաձայնագրի դրույթներին չհամապատասխանող հարկմանը հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:
2. Եթե իրավասու մարմինը դիմումը համարում է հիմնավորված և եթե նա ի վիճակի չէ ինքնուրույն հանգելու գոհացուցիչ լուծմանն, ապա նա ձգտում է հարցը լուծել մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Համաձայնագրին չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով: Ցանկացած ձեռք բերված պայմանավորվածություն կատարվում է անկախ Պայմանավորվող Պետությունների ազգային օրենսդրություններով նախատեսվող որևէ ժամկետային սահմանափակումների:
3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ հակասություն ձգտում են լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ՝ սույն Համաձայնագրով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու նպատակով:
4. Նախորդ կետերի ըմբռնման գործում համաձայնության հասնելու նպատակով Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են միմյանց հետ անմիջական կապ հաստատել:

Շոդված 26

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈՒՍԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները փոխանակվում են այնպիսի տեղեկատվությամբ, որն անհրաժեշտ է սույն Համաձայնագրի դրույթների կամ սույն Համաձայնագրով ընդգրկվող հարկերի առնչությամբ Պայմանավորվող Պետությունների ազգային օրենսդրությունների իրագործման համար այնքանով, որքանով հարկումը չի հակասում սույն Համաձայնագրին: Տեղեկատվության փոխանակումը սույն Համաձայնագրի 1 հոդվածով չի սահմանափակվում: Պայմանավորվող Պետության կողմից ստացված ցանկացած տեղեկատվություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես և այդ Պետության ազգային օրենսդրության շրջանակներում ստացված տեղեկատվություն, և հայտնվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարաններն ու վարչական մարմինները), որոնք զբաղված են սույն Համաձայնագրով ընդգրկվող հարկերի որոշմամբ կամ գանձմամբ, հարկադիր բռնագանձմամբ կամ որոշումների կատարմամբ, կամ դիմումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկատվությունը օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարա-

կել տեղեկատվությունը դռնբաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումներ ընդունելիս:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթներն ոչ մի դեպքում չեն դիտարկվում որպես Պայմանավորվող Պետությանը պարտավորեցնող՝

ա) կիրառելու այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքներին կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկատվություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքների կամ սովորական վարչական գործավարության շրջանակներում,

գ) ներկայացնելու տեղեկատվություն, որը կբացահայտի որևէ առևտրական, ձեռնարկատիրական, արդյունաբերական, առևտրային կամ մասնագիտական գաղտնիք, կամ առևտրական գործընթաց, կամ տեղեկատվություն, որի բացահայտումը կհակասեր պետական քաղաքականությանը:

Շոդված 27

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԵՎ ԸՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՂԱՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական ծառայությունների անդամների միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված հարկային արտոնությունների վրա:

Շոդված 28

ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական արարողակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցման օրվանից և նրա դրույթները գործում են՝

ա) Հայաստանի դեպքում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարվող եկամուտների նկատմամբ,

ii) այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող ցանկապատ հարկային ժամանակաշրջանում գանձվող հարկերի նկատմամբ,

բ) Բելառուսի դեպքում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուն հաջորդող հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ,

ii) այլ հարկերի առնչությամբ՝ Համաձայնագրի ուժի մեջ մտնելուն հաջորդող հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող ցանկապատ հարկային ժամանակաշրջանում գանձվող հարկերի նկատմամբ:

Հողված 29

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱՂԱՐԵՅՈՒՄԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մնում այնքան ժամանակ, մինչև նրա գործողությունը չդադարեցվի Պայմանավորվող Պետության կողմից: Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը, ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի անց սկսվող ցանկացած օրացույցային տարվա ավարտից առնվազն 6 ամիս առաջ, կարող է դիվանագիտական խողովակներով գրավոր ծանույցման ճանապարհով դադարեցնել Համաձայնագրի գործողությունը: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է՝

ա) Հայաստանի դեպքում՝

- i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարված եկամուտների նկատմամբ,
- ii) այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացույցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող ցանկացած հարկային ժամանակաշրջանում գանձվող հարկերի նկատմամբ,

բ) Բելառուսի դեպքում՝

- i) աղբյուրի մոտ գանձված հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ,
- ii) այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող ցանկացած հարկային ժամանակաշրջանում գանձվող հարկերի նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ, համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալներս, ստորագրեցինք սույն Համաձայնագիրը:

Կատարվել է Մինսկ քաղաքում 2000թ. հուլիսի 19-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, բելառուսերեն և ռուսերեն լեզուներով: Բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնության առաջացման դեպքում գերակայում է ռուսերեն լեզվով տեքստը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ԲԵԼՈՒՐՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի Հանրապետության Կառավարության միջև 2000 թվականի հուլիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի Հանրապետության Կառավարության միջև՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Բելառուսի Հանրապետության Կառավարությունը,

հաշվի առնելով 2000 թվականի հուլիսի 19-ին Մինսկում ստորագրված «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Բելառուսի Հանրապետության Կառավարության միջև՝ եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) դրույթները արդիականացնելու անհրաժեշտությունը,

առաջնորդվելով Համաձայնագրի դրույթները Հայաստանի Հանրապետությունում և Բելառուսի Հանրապետությունում կատարված տնտեսական և իրավական փոփոխություններին համապատասխանեցնելու ձգտումով,

համաձայնեցին ներքոնշյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրի 2-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» և «բ» ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա) Հայաստանի Հանրապետությունում՝

- i) իրավաբանական անձանց շահութահարկ,
- ii) ֆիզիկական անձանց եկամտահարկ,
- iii) գույքահարկ,

բ) Բելառուսի Հանրապետությունում՝

- i) օտարերկրյա կազմակերպությունների եկամուտներից հարկ,
- ii) շահութահարկ,
- iii) ֆիզիկական անձանց եկամտահարկ,
- iv) անշարժ գույքի հարկ:»:

Հողված 2

1. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ը) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է՝

i) Հայաստանի դեպքում՝ ֆինանսների նախարարություն կամ Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչներ,

ii) Բելառուսի դեպքում՝ հարկերի և գանձումների նախարարություն կամ նրա կողմից լիազորված ներկայացուցիչ,»:

2. Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել «ժ»-ից «ժգ» ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժ) «ձեռնարկություն» տերմինը կիրառվում է անձի կողմից ցանկացած ձեռնարկատիրական գործունեության իրականացման նկատմամբ,

ժա) «ձեռնարկատիրական գործունեություն» տերմինը ներառում է մասնագիտական ծառայությունների մատուցումը և անկախ բնույթի այլ ձեռնարկատիրական գործունեության իրականացումը,

ժբ) «մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է, մասնավորապես, անկախ գիտական, գրական, գեղարվեստական, կրթական կամ մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, իրավաբանների, ինժեներների, ճարտարապետների, ատամնաբույժների, հաշվապահների, աուդիտորների անկախ գործունեությունը,

ժգ) «փաստացի ղեկավարման վայր» տերմինը նշանակում է՝ վայր, որտեղ իրականացվում է ընկերության փաստացի կառավարումն ու վերահսկումը, և (կամ) որտեղ ընդունվում են ընկերության կառավարման համար էական կարևոր հարցերի վերաբերյալ բարձր մակարդակով որոշումները:»:

Հողված 3

1. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում՝

«ոեզիդենտության» բառից հետո կետը լրացնել «, փաստացի ղեկավարման վայրի» բառերով, կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Տվյալ տերմինը ներառում է նաև Պայմանավորվող պետությունը կամ նրա իշխանության տեղական մարմինը»:

2. Համաձայնագրի 4-րդ հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Երբ, սույն հոդվածի 1-ին կետի դրույթներին համապատասխան, ֆիզիկական անձ չհանդիսացող անձը երկու Պայմանավորվող պետություններում էլ ճանաչվում է

ռեզիդենտ, ապա նա համարվում է միայն այն Պայմանավորվող պետության ռեզիդենտ, որտեղ գտնվում է նրա փաստացի ղեկավարման վայրը:»:

Հոդված 4

1. Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նա ունի այն Պայմանավորվող պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է տվյալ գույքը: Ծովային և օդային նավերը, ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտային միջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում: Սույն հոդվածի համաձայն հարկման ենթակա անշարժ գույքից եկամուտը ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքի, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունների ու սարքավորումների, այն իրավունքների ուղղակի օգտագործումից, վարձակալությունից կամ ցանկացած այլ ձևով օգտագործումից ստացված եկամուտը, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը, անշարժ գույքի ուզուֆրուկտին և հանքային պաշարների, հանքավայրերի և այլ բնական ռեսուրսների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման կարգով վճարվող՝ փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքներին վերաբերող ընդհանուր իրավունքի դրույթները:»:

2. Համաձայնագրի 6-րդ հոդվածի 4-րդ կետից հանել «և անկախ անձնական ծառայությունները մատուցելու համար օգտագործվող անշարժ գույքից» բառերը:

Հոդված 5

Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետը «հարկի գումարի համապատասխան ճշգրտում» բառերից հետո լրացնել «, եթե նման ճշգրտումը համարի հիմնավորված» բառերը:

Հոդված 6

Համաձայնագրի 10-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող պետություններից մեկի ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որի ռեզիդենտ է շահաբաժիններ վճարող ընկերությունը, այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով, և եթե մասնակցությունը այն կապիտալում, որի կապակցությամբ վճարվում են շահաբաժինները, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) հետ: Այդ դեպքում կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները:

5. Այն դեպքում, երբ մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը շահույթ կամ եկամուտ է ստանում մյուս Պայմանավորվող պետությունից, ապա այդ մյուս Պայմանավորվող պետությունը չի հարկում

ընկերության կողմից վճարվող շահաբաժինները՝ բացառությամբ այն դեպքերի, եթե այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ եթե մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրապես կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) հետ, և չբաշխված շահույթից գանձվող հարկով հարկման չի ենթարկում ընկերության չբաշխված շահույթը, եթե անգամ վճարած շահաբաժինները կամ չբաշխված շահույթն ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից:»:

Հոդված 7

Համաձայնագրի 11-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները, այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով, և պարտապահանջը, որի հիման վրա վճարվում են տոկոսները, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) հետ: Այդ դեպքում կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողը հենց այդ Պայմանավորվող պետությունն է, նրա իշխանության տեղական մարմինը կամ այդ Պայմանավորվող պետության ռեզիդենտը: Սակայն եթե տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն (ներկայացուցչություն), որի կապակցությամբ առաջացել է այն պարտքը, որի համար վճարվում են տոկոսները, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը), ապա այդպիսի տոկոսները համարվում են առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը):»:

Հոդված 8

1. Համաձայնագրի 12-րդ հոդվածի 3-րդ կետի «կամ մոդելի» բառերից հետո լրացնել «համակարգչային ծրագրի,» բառերով:

2. Համաձայնագրի 12-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին, այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց կապակցությամբ վճարվում է ռոյալթին, իրապես կապված են այդպիսի

մշտական հաստատության (ներկայացուցչության) հետ: Այդ դեպքերում կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող պետությունում, եթե վճարողը հենց ինքը՝ Պայմանավորվող պետությունն է, նրա իշխանության տեղական մարմինը կամ այդ Պետության ռեզիդենտը: Սակայն եթե ռոյալթի վճարող անձը, անկախ Պայմանավորվող պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող պետությունում ունի մշտական հաստատություն (ներկայացուցչություն), որի կապակցությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորություն, և այդ ռոյալթի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը), ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը (ներկայացուցչությունը):»:

Հոդված 9

1. Համաձայնագրի 13-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում ունեցած մշտական հաստատության (ներկայացուցչության) ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի օտարումից ստացված եկամուտները, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) օտարումից (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ միասին) ստացված եկամուտները, կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:»:

2. Համաձայնագրի 13-րդ հոդվածը լրացնել 3¹ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3¹ Մի Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող անշարժ գույքում ակտիվների արժեքի ավելի քան 50 տոկոս ունեցող ընկերության բաժնետոմսերի կամ հիմնադիր կապիտալում մասնակցության այլ բաժնեմասերի օտարումից ստացված եկամուտները կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող պետությունում:»:

3. Համաձայնագրի 13-րդ հոդվածի 4-րդ կետում «և 3-րդ» բառերը փոխարինել «, 3 և 3¹-րդ» բառերով:

Հոդված 10

Համաձայնագրի 14-րդ հոդվածը հանել:

Հոդված 11

Համաձայնագրի 15-րդ հոդվածի 2-րդ կետի «գ» ենթակետից հանել «կամ հաստատուն բազան» բառերը:

Հոդված 12

1. Համաձայնագրի 17-րդ հոդվածի 1-ին կետում՝

«14-րդ և 15-րդ հոդվածների» բառերը փոխարինել «15-րդ հոդվածի» բառերով,

«կինոյի» բառից հետո ավելացնել «, կրկեսի» բառը:

2. Համաձայնագրի 17-րդ հոդվածի 2-րդ կետի «, 14-րդ» բառը հանել:

Հոդված 13

Համաձայնագիրը լրացնել 20¹ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 20¹

Պրոֆեսորներ, մանկավարժներ և հետազոտողներ

1. Պրոֆեսորը, մանկավարժը կամ հետազոտողը, ովքեր հանդիսանում է մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ կամ դրա ռեզիդենտ են հանդիսացել մինչև մյուս Պայմանավորվող պետություն անմիջապես ժամանելը և իրար հաջորդող երկու տարին չգերազանցող ժամանակահատվածի ընթացքում գտնվում են այդ մյուս Պայմանավորվող պետությունում մյուս Պայմանավորվող պետության Կառավարության կողմից որպես կրթական հաստատություն հավատարմագրված ցանկացած համալսարանի, քոլեջի, դպրոցի կամ այլ կրթական հաստատության հրավերով, այդ կրթական հաստատությունում բացառապես դասավանդման և (կամ) գիտական աշխատանք կատարելու նպատակով, այդ մյուս Պայմանավորվող պետությունում ազատվում են հարկումից այդպիսի դասավանդման կամ գիտական աշխատանքի իրականացման համար վարձատրության առնչությամբ:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները չեն կիրառվում գիտական հետազոտություններից ստացվող եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի հետազոտություններն իրականացվում են ոչ թե պետության շահերից ելնելով, այլ կոնկրետ անձի կամ անձանց մասնավոր անձնական շահի համար:»:

Հոդված 14

Համաձայնագրի 21-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները կիրառվում են միայն սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքից եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտներ ստացողը, լինելով մի Պայմանավորվող պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության) միջոցով, և այն իրավունքը կամ գույքը, որի կապակցությամբ վճարվում է եկամուտը, իրապես կապված է այդպիսի մշտական հաստատության (ներկայացուցչության) հետ: Այդ դեպքում կիրառվում են սույն Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթները:»:

Հոդված 15

Համաձայնագրի 22-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Մի Պայմանավորվող պետության ձեռնարկության՝ մյուս Պայմանավորվող պետությունում գտնվող մշտական հաստատության (ներկայացուցչության)

ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքով ներկայացված գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:»:

Հոդված 16

Համաձայնագրի 23-րդ հոդվածի 1-ին կետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն կետի «ա» ենթակետի նպատակներից ելնելով՝ «այդ մյուս Պետությունում վճարված եկամտի (շահույթի) հարկի գումարին հավասար չափով» տերմինը չի ներառում եկամտի հարկի այն մասին հավասար գումարը, որը, մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան, գանձվում է կենսաթոշակային (սոցիալական) ապահովության վճարները կատարելու համար:»:

Հոդված 17

Համաձայնագրի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 26

Տեղեկությունների փոխանակում

1. Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները փոխանակում են տեղեկություններ սույն Համաձայնագրի դրույթների կատարման կամ Պայմանավորվող պետությունների կամ նրանց իշխանության տեղական մարմինների անունից գանձվող՝ ցանկացած տեսակի և բնույթի հարկին առնչվող՝ ազգային օրենսդրությունների կիրառման կամ հարկադիր կատարման վերաբերյալ՝ այն չափով, ինչքանով նման հարկումը չի հակասում սույն Համաձայնագրի դրույթներին: Տեղեկությունների փոխանակումը չի սահմանափակվում սույն Համաձայնագրի 1-ին և 2-րդ հոդվածներով:

2. Պայմանավորվող պետության կողմից սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի այնպես, ինչպես այդ Պայմանավորվող պետության ազգային օրենսդրության շրջանակներում ստացված տեղեկությունը, և հաղորդվում է միայն այն անձանց կամ մարմիններին (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք առնչվում են սույն հոդվածի 1-ին կետում նշված հարկերի որոշմանը կամ գանձմանը, հարկադիր բռնագանձմանը կամ դատական հետապնդմանը կամ բողոքների քննմանը, կամ այդ գործողությունների նկատմամբ հսկողությանը: Այդ անձինք կամ մարմինները նման տեղեկությունն օգտագործում են միայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունը բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների կայացման ժամանակ:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող պետությանը պարտավորեցնող.

ա) կիրառել այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը և վարչական գործունեությանը հակասող վարչական միջոցառումներ.

բ) տրամադրել տեղեկություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող պետության օրենսդրությանը համապատասխան կամ սովորական վարչական գործունեության ընթացքում:

գ) տրամադրել տեղեկություն, որը կբացահայտի որևէ առևտրային, ձեռնարկատիրական, արդյունաբերական, կոմերցիոն կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրային գործընթաց, կամ՝ տեղեկություն, որի բացահայտումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակական շահերին):

4. Եթե մի Պայմանավորվող պետություն, սույն հոդվածին համապատասխան, տեղեկություն է հայցում, մյուս Պայմանավորվող պետությունը ձեռնարկում է օրենսդրությամբ սահմանված իր միջոցները հայցվող տեղեկությունը ձեռք բերելու համար՝ նույնիսկ այն դեպքում, եթե այդ մյուս Պայմանավորվող պետությունն իր սեփական հարկային նպատակների համար չունի այդ տեղեկության կարիքը: Տվյալ պարտավորությունը ենթակա է սույն հոդվածի 3-րդ կետում նշված սահմանափակումներին, բայց այդպիսի սահմանափակումները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես Պայմանավորվող պետությանը տեղեկության տրամադրումը մերժելու թույլտվություն միայն այն պատճառով, որ ինքը այդպիսի տեղեկություն ստանալու հարցում հետաքրքրություն չունի:

5. Սույն հոդվածի 3-րդ կետի դրույթները ոչ մի դեպքում չպետք է մեկնաբանվեն որպես թույլտվություն Պայմանավորվող պետությանը՝ մերժել տեղեկության տրամադրումը միայն այն պատճառով, որ նման տեղեկության տիրապետում է բանկը, այլ ֆինանսավարկային հաստատությունը, նշանակված անձը կամ որպես միջնորդ կամ վստահորդ գործող անձը, կամ որ տեղեկությունը վերաբերում է անձի սեփականության իրավունքին:»:

Հոդված 18

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում Պայմանավորվող պետությունների կողմից դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ բոլոր ներպետական ընթացակարգերը կատարվելու մասին դիվանագիտական ուղիներով վերջին գրավոր ծանուցումն ստանալու օրվանից: Սույն Արձանագրության դրույթները կիրառվում են այն հարկային ժամանակահատվածների նկատմամբ, որոնք սկսվում են սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի 1-ին կամ 1-ից հետո:

Հոդված 19

Սույն Արձանագրության դրույթները Համաձայնագրի անբաժանելի մասն են: Սույն Արձանագրությունը գործում է Համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում:

Ի հաստատումն որի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված, ստորագրեցին սույն Արձանագրությունը:

Կատարված է Երևան քաղաքում 2016 թվականի Մայիսի 19 ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, բելառուսերեն և ռուսերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարաձայնություններ առաջանալու դեպքում նախապատվություն կտրվի ռուսերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ԲԵԼԱՐՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

